



## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/120/2025

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

15 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մայիսի 15-ին քննելով Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ՝ Վաչագան Ռուբիկի Մովսիսյանի ընտանիքի անդամ Գայանե Մարկոսի Եղիազարյանի կողմից՝ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/120/2025 գործը՝

### ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով Վաչագան Ռուբիկի Մովսիսյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրել է վերջինիս ընտանիքի անդամ Գայանե Եղիազարյանի գույքային դրությունը, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացվել է հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում արձանագրել է հետևյալը՝

Հայտարարագրում Գայանե Եղիազարյանը բանկային հաշիվների մնացորդներ չի ներկայացրել, մինչդեռ նրա բանկային հաշիվների մնացորդները 2023 թվականի տարեվերջին կազմել են 1,213,741 ՀՀ դրամ:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի ապրիլի 28-ին Գայանե Եղիազարյանին է հասցեագրել է թիվ 01/1773-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 16:30-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 16:00-ին գործի քննությանը մասնակցելուն, որի վերաբերյալ Գայանե Եղիազարյանը պատշաճ ծանուցվել է 2025 թվական մայիսի 8-ին (հիմք՝ AL0127678216AM անդորրագիրը):

1.3 2025 թվականի մայիսի 13-ին պատշաճ ծանուցված Գայանե Եղիազարյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 75/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Գայանե Եղիազարյանի բացակայությամբ 2025 թվականի մայիսի 15-ին՝ ժամը՝ 16:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

## **II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ**

Գայանե Եղիազարյանը 2025 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողով է ներկայացրել գրավոր պարզաբանում, որով հայտնել է, որ «(...) 2023 թվականի ընթացքում իմ եկամուտները կազմել են միայն իմ կենսաթոշակի գումարները, որոնց վերաբերյալ ես տեղեկություններ եմ ներառել իմ 2023 թվականի տարեկան հաշվետվությունում: Հաշվետվությունում չեմ ներկայացրել իմ կենսաթոշակայինի հաշվի մնացորդը՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, քանի որ հաշվետվությունը լրացնելու օրվա դրությամբ չեմ տիրապետել նման տեղեկատվության, իսկ առողջական խնդիրների պատճառով չեմ կարողացել այցելել բանկ և ճշտել հաշվիս մնացորդի քանակությունը նշված ժամանակահատվածում: Ստանալով Ձեր գրությունը՝ այցելել եմ բանկեր, որտեղից ստացել եմ իմ բանկային հաշվների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, համաձայն որի՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իմ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից սպասարկվող հաշվի մնացորդը կազմել է 410.165 ՀՀ դրամ, ինչը հանդիսանում է իմ կենսաթոշակից գոյացած գումարը, իսկ [REDACTED] կողմից սպասարկող հաշվի մնացորդը կազմել է 321 ՀՀ դրամ, ինչը 2022 թվականի ընթացքում ստացված իմ աշխատավարձի մնացորդն է հանդիսանում:

Միաժամանակ, Գայանե Եղիազարյանը Հանձնաժողով է ներկայացրել իր բանկային հաշիվների քաղվածքները:

## **III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր**

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/120/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ՝ Վաչագան Ռուբիկի Մովսիսյանի ընտանիքի անդամ՝

Գայանե Մարկոսի Եղիազարյանը հանդիսանում է հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Վարչական վարույթի ընթացքում պարզվել է, որ ԿԲ-ի տվյալների համաձայն՝ Գայանե Եղիազարյանի բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 368,843 ՀՀ դրամ, իսկ Գայանե Եղիազարյանի կողմից ներկայացված քարտային հաշիվների քաղվածքների տվյալների համաձայն՝ 410,486 ՀՀ դրամ, որից 410,165 ՀՀ դրամը առկա է եղել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի քարտային հաշվին, ինչը հանդիսացել է բացառապես նրա կենսաթոշակից գոյացած գումարը, իսկ 321 ՀՀ դրամը [REDACTED], մինչդեռ նա Հայտարարագրում բանկային հաշվի մնացորդներ չի ներկայացրել:

#### **IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.**

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

Նույն հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը:

4.3 Օրենսգիրք 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոոուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

**Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.**

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով Քննչական կոմիտեի Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Վաչագան Ռուբիկի Մովսիսյանի ընտանիքի անդամ Գայանե Մարկոսի Եղիազարյանը Հայտարարագրում անզգուշաբար ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է.

Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում բանկային հաշվի մնացորդներ չի հայտարարագրել, մինչդեռ ԿԲ-ից ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Գայանե Եղիազարյանի բանկային հաշվի մնացորդը կազմել է 368,843 ՀՀ դրամ, իսկ Գայանե Եղիազարյանի կողմից ներկայացված [REDACTED] տվյալների համաձայն՝ համապատասխանաբար 410,165 ՀՀ դրամ և 321 ՀՀ դրամ, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ թեև Գայանե Եղիազարյանը Հայտարարագրում բանկային հաշիվների մնացորդները չհայտարարագրելով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը և թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք, այդուհանդերձ նկատի ունենալով այն, որ չհայտարարագրված բանկային հաշվի մնացորդը, բացառությամբ 321 ՀՀ դրամի, գոյացել է բացառապես նրա կեսաթոշակից՝ Հանձնաժողովը գտնում է, որ վերջինիս կողմից թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Գայանե Մարկոսի Եղիազարյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Մարկոսի Եղիազարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Գայանե Մարկոսի Եղիազարյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

**ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**